ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների իշխանական տոհմի, նրա Ղարաբաղյան ճյուղի ու առանձին ներկայացուցիչների պատմությանը վերաբերող առատ տեղեկություններ են պահպանվել զանազան սկզբնաղբյուրներում. վիմագրական արձանագրություններում, փաստավավերագրակսն այլ նյութերում (պարսկալեզու հրովարտակներ, կալվածագրեր, ինչպես նաև ռուսական տիրապետության շրջանի դատական գործեր) ու ժողովրդական բանահյուսության մեջ, որոնք դարձել են տարբեր ժամանակների պատմաբանների ուսումնասիրության առարկան: Դեռևս XIX դարի հայ ուսումնասիրողները գրել են այդ իշխանական տան պատմությանը նվիրված ուսումասիրություններ[1]:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի «Մելիք-Շահնազարյանների» ֆոնդում են պահվում Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյաններին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր՝ կցված Սիր-Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի և այդ տոհմի XIX դարի այլ ներկայացուցիչների խնդիրների կապակցությամբ հարուցված դատական գործերին[2]: Այդ փաստաթղթերը պարունակում են հիշյալ տոհմի պատմությանը վերաբերող արժեքավոր տվյալներ, որոնցից ժամանակին օգտվել է Մ. Սմբատյանցը ու թարգմանաբար ներկայացրել իր «Նկարագիր ծովազարդ գաւառին Գեղարքունու» երկում: Մելիք-Շահնազարյանների ֆոնդում պահվող գործ № 1-ը հարուցվել էր Արևելյան Հայաստանի Ռուսաստանի կայսրության կազմի մեջ մտնելու սկզբնական շրջանում՝ Սիր Դավիթ Մելիք-Շահնազարյանի կալվածատիրական իրավունքների վերականգնման հարցի կապակցությամբ: Գործ № 1-ին կցված են 29 պարսկալեզու փաստաթղթեր՝ իրենց ռուսերեն թարգմանություններով: Այդ փաստաթղթերի մեծ մասը բնագրերի պատճեններն են կազմված XIX դարի 20-ականներին և հաստատված միևնույն (3 արաբատառ և 1 հայատառ) նոտարական կնիքներով, սակայն կան նաև 8 բնագրեր:

Այդ գործում ընդգրկված փաստաթղթերում նշվում է, որ Սիր Դավիթ-խանը Շափուրի որդի Մելիք Շահնազարի ժառանգներից է[3]: Այս Մելիք Շահնազարին է վերաբերում գործում ընդգրկված ժամանակագ-

ական կարգով վերջին փաստաթուղթը[4]: Այն իրենից ներկայացնում է Երևանի շարիաթի 1121 հ. թ. մուհարրամ ամսի (1708թ. հոկտեմբերի 16 - նոյեմբերի 14) արձանագրությունը, ըստ որի, հակառակ Մեհդի Ղուլի Բեկ Ջաբրայիլլուի հավակնություններին, 18 հեղինակավոր անձանց վկայությունների ու փաստաթղթերի հիման վրա հաստատվում է Ղարանլուղարա գյուղի[5] պատկանելությունը Մելիք Բեկի ու Մելիք Շահնազարի տոհմին և որ այն ժառանգաբար փոխանցվել է Մելիք Շափուրի որդի Մելիք Շահնազարին և նրա ազգական Միրզաջանին, որը Սպահանում է գտնվում՝ հանդիսանալով շահի պալատականը:

Իր տոհմաբանության վերաբերյալ Միր Դավիթ Մելիք-Շահնազարյանը նշում է, որ Շափուրի որդի Մելիք Շահնազարի ժառանգներից (կամ որդիներից) Միրզաջան Բեկի թոռն էր և Ծատուրի որդին[6]: Դավիթ Մելիք-Շահնազարյանի վերաբերյալ որոշ կենսագրական տվյալներ է հաղորդում Գ. Շերմազանյանը, որն անձամբ ծանոթ էր նրան[7]: Նրա մանկության ու պատանեկության շրջանի մասին տվյալները փոքր-ինչ անորոշ են: Ըստ Շերմազանյանի՝ Դավիթ Մելիք-Շահնազարյանի հայրը սպանվել էր Գեղարքունիքի Մազրա գյուղում, և նրա մայրը հղի վիճակում գերվել ու տարվել էր Իրան, որտեղ Նոր Ջուղայի մեծահարուստ հայերը իմանալով, որ նա Գեղամա մելիքական տան հարսն է, գնում են նրան: Սպահանում ծնվում է Դավիթը, որը լավ կրթություն է ստանում և այնուհետև ինչ-ինչ պատճառներով հայտնվում է Ֆրանսիայում: Այստեղ նա ծանոթանում է Հակոբ Շահան-Ջրպետյանի հետ, որի կողմից էլ նա որպես հայերեն, պարսկերեն ու ֆրանսերեն լեզուներին տիրապետող անձնավորություն ներկայացվում է Նապոլեոնին՝ նրա ու Ֆաթհալի շահի միջև նամակագրական կապ հաստատելու համար: Ըստ Շերմազանյանի, Դավթի միջոցով նամակներ են փոխանակվել Նապոլեոնի ու Ֆաթհալի շահի միջև[8]: Այս առիթով մի քանի անգամ Դավիթ Մելիք-Շահնազարյանը Ֆրանսիայից գնում է Իրան ու ետ վերադառնում: 1811թ. Իրանից Փարիզ գնալու ճանապարհին Դավիթը հանդիպում է Ներսես Աշտարակեցուն: 1816թ. Փարիզից Ներսես արքեպիսկոպոսին Շահան-Ջրպետյանի կողմից հղված մի նամակում նշվում է, որ պարսկական դեսպան Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի միջոցով ստացել է նրա նամակը: Ֆրանսիայում գտնվելու տարիներին նա գրում է մի ակնարկ Իրանի տվյալ ժամանակաշրջանի դրության մասին[9]:

Այնուհետև Դավիթ Մելիք-Շահնազարյանը վերադառնում է Պարսկաստան, որտեղ պետական ծառայության է անցնում՝ ստանալով գլխավոր քարգմանչի պաշտոն և խանի տիտղոս[10]:

1824թ. թագաժառանգ Աբաս Միրզայի և երկու տարի անց նաև Ֆաթհալի շահի հրամանագրերով Գեղարքունիքի գյուղերի նկատմամբ կալվածատիրական իրավունքը հանձնվում է Դավիթ Մելիք-Շահնազարյանին[11]: Հետաքրքիր է, որ այս հրամանագրերը տրված են հենց այն

ժամանակաշրջանում, երբ Գեղարքունիքի ու Սադաբաքի կապակցությամբ տարածքային վեճեր էին ընթանում Իրանի և Ղարաբաղում ու Վրաստանում հաստատված ռուսական իշխանությունների միջև[12]: Գեղարքունիքը գտնվում էր ռուսական գերիշխանության տակ և այս կերպ հավանաբար Իրանի թագաժառանգը ցանկանում էր իր դիրքերը հաստատել վիճելի տարածքում, քանի որ Դավիթ Խանը նրա արքունի պաշտոնյաներից ու հավատարիմ անձանցից էր: Բնականաբար, նման պայմաններում Դավիթ Մելիք-Շահնազարյանի հավակնությունները չպետք է խրախուսվեին ռուսական կառավարության կողմից: Այս պատճառով Դավիթ Մելիք-Շահնազարյանի կողմից այս խնդրի շուրջ Անդրկովկասի ռուսական կառավարչապետ Երմոլովին ուղղված նամակը, անհետևանք է մնում[13]: Դավիթ խանը նշում է, որ իր կալվածքների կապակցությամբ նա Երմոլովին էր դիմել Ներսես արքեպիսկոպոսի միջնորդությամբ, որի հետ նա որոշ հարաբերություններ է ունեցել նաև Էջմիածնի պարտքերի հարցով: Պահպանվել են 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի շրջանի մի շարք փաստաթղթեր, որոնք վկայում են Եփրեմ կաթողիկոսի օրոք Էջմիածնի պարտքերի զեղչման նպատակով, հայ բարձրաստիճան հոգևորականների ու պարսից իշխանությունների միջև վարվող բանակցություններում Դավիթ Մելիք-Շահնազարյանի որպես միջնորդ հանդես գալու մասին[14]: Կա անգամ շար'ի[15] դատարանի նիստի մի արձանագրություն այն մասին, որ Դավիթ Խան Մելիք-Շահնազարյանը Էջմիածնի Եփրեմ կաթողիկոսի անունից ու Ներսես արքեպիսկոպոսի հանձնարարականով պաշտպանում է վանքի շահերը նրա պարտատերերից մեկի՝ ոմն Հաջի Բաղերի դեմ, քանի որ վերջինս իր պարտքի դիմաց ավելի գումար էր գանձել[16]:

Նախքան ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ավարտը (1828թ.) Դավիթ խանը աշխատել է նաև Բաղդադում գտնվող Ֆրանսիական հյուպատոսարանում[17], որպես իրանական խնդիրներով զբաղվող հանձնակատար, իսկ 1828թ. գաղթում է Արևելյան Հայաստան:

Գործ 1-ին կցված բնագրերից առաջինը[18] Սիր Դավիթ Մելիք-Շահնազարյան Շափուրյանի կողմից 1828թ. մարտի 6-ին Թավրիզում գրված խնդրագիրն է գեներալ-ֆելդմարշալ կոմս Ի. Ֆ. Պասկևիչին, որով խնդրում է թույլ տալ անցնել Ռուսաստանի տարածքները և, ընդունելով ռուսական հպատակություն, ստանալ Գեղարքունիքում գտնվող իր տոհմական կալվածքները, որոնք ձգվում են առևելքում Թուխլիջե գյուղից[19] մինչև Մազրա[20], և այնտեղից մինչև Ղոթ[21], ներառյալ Մեծ Ենգիջա[22], Ամրսաղ[23], Սիուսբաղ[24], Մուզար[25], Գյուրջի Վերան[26], Այթուն Թախթ[27], Փոքր Ենգիջա[28], Փոքր Արաք[29], Ղարանլուղդարա գյուղերը, որոնք Ֆաթհալի շահի ու նրա թագաժառանգ Աբաս Միրզայի հրամանագրերով իրեն էին հանձնվել:

Այնուհետև հաջորդում են Մելիք-Շահնազարյանների տոհմին վերաբերյալ շահական հրամանագրերի ու կալվածագրերի պատճենները, որոնցից մի քանիսը, ինչպես վերը նշեցինք, թարգմանվել ու հրատարակվել են Մ. Սմբատյանցի գրքում:

Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի կալվածատիրական իրավունքների պաշտպանության օգտին է հանդես գալիս Երևանի կառավարիչ Մուհամմադ Հուսեյն խան սարդարը, որը իր պարսկամետ քաղաքականությամբ փորձում էր պաշտպանվել ռուսական վտանգից: Պահպանված վավերագրերից մեկի համաձայն Երևանի Մուհամմադ Հուսեյն խանը Դավիթ խան Մելիք-Շահնազարյանին ուղղված իր նամակում նշում է, որ նրա խնդրագիրը և թագաժառանգի հրամանագրի պատճեն ստացվել են և Ռուսաստանի Գլխավոր հրամանատարը ևս թույլատրել է որպեսզի վերջինս զարնանը գնա իր ժառանգական տիրույթների տերը դառնա, ուստի նա ևս հավանություն է տալիս նրա գալստյանը[30]: Այս ուղղությամբ նա անգամ որոշ քայլեր է ձեռնարկում. նրա կողմից 1241 հ. թ. ռաբի՝ առաջին ամսին (1825թ. հոկտեմբերի 14 – նոյեմբերի 13) Մելիք Բարսեղի անունով հրապարակվում է մի հրամանագիր, որով նրան հանձնարարվում է գնալ կառավարել Գյոքչայի մահալը[31] և Դավիթ Խանի կալվածքներից գանձել մալիքանեն[32]: Նույն ֆոնդի գործ 1-ում կա նաև Երևանի Մուհամմադ Հուսեյն խան Սարդարի գրությունը Դավիթ խան Մելիք-Շահնազարյանին, որում սարդարը վերջինիս տեղեկացնում է, որ շուրջ 300-400 բնակիչ է գաղթեցրել Թուրքիայի տարածքներից նրա կալվածքներում բնակեցնելու և դրանք շենացնելու նպատակով[33]: Այս ամենը ընդհատվում է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի պատճառով: Այնուհետև Երևանի խանությունը միացվում է Ռուսական կայսրությանը, որից հետո, չնայած իր կողմից Ռուսաստանի հպատակությունն ընդունելուն, երկարատև համառ պայքարին ու դատական քաշքշուկներին, Դավիթ Մելիք-Շահնազարյանին չի հաջողվում տեր դառնալ իր պապենական կալվածքներին:

Գ. Շերմազանյանը հետևյալն է հաղորդում նրա հետագա ճակատագրի մասին. «1830-1831թթ. երբ ես Երևան էի, յաճախ կը տեսնուէի Դաւիթ խանի հետ: Համարեա թէ ամենայն օր նա կը յաճախէր իւր վէճի յամար դատարանները, մանաւանդ դատաւորների և նահանգապետի մօտ»[34]: Որևէ եկամուտի աղբյուր ու աշխատանք չունենալով Դավիթ Մելիք-Շահնազարյանը հետզհետե վաճառում է իր մոտ եղած բոլոր քիչ թե շատ արժեքավոր իրերը (նաև շահի պարգևած «առյուծի և արևի» շքանշանը), ընկնում պարտքերի տակ: Ի վերջո Երևանի նահանգապետ Բ. Բեհբութովը, որը «թերևս համոզուած էր, որ Ռուսաց այնտեղի կառավարութիւնը դատարկ թղթակցութիւններով է զբաղեցնում Դաւթի միտքը, խորհուրդ է տալիս որ մէկ աղերսագիր գրէ Կայսեր անունով և նրա մէջն ասէ, թէ իմ հայրենական կալուածներն ընծայեցի Ռուսաց կայսերու-

թեան, հետևաբար աղերսէ, որ Տէլտաթիւնը նրան գոնէ մէկ գումար նշանակէ, որով նա կարողանայ ապրիլ»[35]: Ինչպես հայտնի է դառնում վերը նշված գործ 1-ին կցված ռուսական պաշտոնյաների զեկուցագրերի բովանդակությունից, Դավիթ խանը իրոք խնդրագիր է հղում Ռուսաց կայսրը և նրա զանձարանին նվիրում իր կալվածքները: Դրա դիմաց կայսրը նրան տարեկան թոշակ է նշանակում 1000 ոսկե դրամ (червонец), որը սակայն չստացած, Դավիթ խանը մահանում է 1831 թ. փետրվարին[36]. Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի մահից հետո տարեկան 60 ոսկե դրամ (червонец) է նշանակվում նրա ազգականներ Խաչատուր, Մելիք Բարսեղ և Ստեփան Շահնազարովներին:

Մատենադարանի վերոհիշյալ ֆոնդի գործ 1-ի վերջին վավերագրերը[37], ինչպես նաև գործ 2-ի և 3-ի փաստաթղթերը վերաբերում են Դավիթ խանի հեռավոր ու մոտ ազգականների ազգակցական կապը նրա հետ և պատկանելությունը Մելիք-Շահնազարյանների տոհմին հաստատելուն, ինչպես նաև նրանց Ռուսաստանի կայսրության պետական գանձարանից ստացվող թոշակի հետ կապված զանազան խնդիրներին:

Սույն հոդվածի շրջանակներում ստորև ներկայացված են Մելիք-Շահնազարյանների ֆոնդի գործ 1-ին կցված պարսկերեն վավերագրերի ճշտված ցուցակը և բնագրային փաստաթղթերից երկուսի թարգմանական տարբերակները:

Ներկայացվող վավերագրերի տվյալների և այլ աղբյուրների հաղորդումների համեմատությունը թույլ են տալիս հետևյալ ճշգրտումները կատարել Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների տոհմի պատմության մեջ:

Դեռևս 1538թ. շահ Թահմասպ Ա-ի հրամանագրով հաստատվում է Գեղարքունիքի Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Սիրաբաղ, Գյուրջի Վերան և Ամրսաղ գյուղերի մուլքերի[38] պատկանելությունը Մելիք Բեկին: Ինչպես հաստատում է XVII դարի հիշատակարաններից մեկը, Մելիք Բեկ էր Գեղարքունիքի Մելիք Շահնազար Ա-ի հոր անունը[39]: Այնպես որ վստահաբար կարելի է պնդել, որ շահ Թահմասպ Ա-ի հիշյալ հրամանագիրը Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությանը վերաբերող մեզ հայտնի ամենահին փաստաթուղթն է:

XVII դարի սկզբին այդ տոհմի նշանավոր ներկայացուցիչն էր Մելիք Շահնազար Ա-ն, որը Շահ Աբաս Ա-ին մատուցած հավատարիմ ծառայությունների դիմաց վերահաստատվում է Գեղարքունիքի մելիքի պաշտոնում: Պարսից շահի ռազմական ձեռնարկումներին մասնակցում են նաև Մելիք Շահնազարի որդիները, որոնցից Յավրին հաջորդում է հորը (վերջինս մահանում է 1606թ.[40]) Գեղարքունիքի մելիքի պաշտոնում, իսկ նրա մահից հետո 1610թ. մելիք է դառնում Մելիք Շահնազարի մյուս որդին՝ Քյամալը:

Մելիք Քյամալի մահից հետո[41], Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1621թ. հրամանագրով[42] հաստատվում են Գեղարքունիքի Մելիք Քյամալի որդի և Մելիք Շահնազարի թոռ Աստվածաթովի[43] (կամ կրճատ ձևը՝ Ածապովին) մելիքական իրավունքները: Աստվածաթովի, որպես Մելիք Շահնազարի թոռան մասին նշվում է 1606թ. մի հիշատակարանում[44]: Այս Աստվածաթովը (կամ Ածապով) որպես Գեղարքունիքի մելիք հիշատակվում է նաև 1652թ. Երևանի բեկլարբեկի կողմից հրապարակված փաստաթղթում[45]: Աստվածաթովին Գեղարքունիքի մելիքի պաշտոնում փոխարինում է նրա որդի Մելիք Բեկը: Ըստ ստորև ներկայացվող շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակի բովանդակության Աստվածաթովի որդի Մելիք Բեկը 1656-7թթ. հաստատվում է Գեղարքունիքի մելիքի պաշտոնում: Մելիք Բեկը որպես Գեղարքունիքի մելիք 1657թ. հիշատակվում է նաև հայոց ձեռագրերի հիշատակարաններից մեկում[46]: Ամենայն հավանականությամբ այս Մելիք Բեկին են վերաբերում Մաքենյաց վանքի Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան պատի վերին մասում գտնվող[47], նաև հետևյալ վիմագիր արձանագրությունները.

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՊԱՐՈՆ ՄԷԼԻՔ ՄԷԼԻՔ ՊԷԿԻՆ, ՈՐԴԻ ՊԱՐՈՆ ԱԾԱՊՈՎԻՆ, ԹՈՌ ՊԱՐՈՆ ՔԱՍԱԼ ՊԷԿԻՆ, ՊԱՐՈՆ ՄԷԼԻՔ ՊԷԿ

ԹՎԻՆ: ՌՃԻԷ (1678) ԿԱՍԱԻՆ ԱՅ ՄԵՔ: Ե (5) ԵՂԲԱՐՔՍ ԵՍ՝ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՄ, ՍԱՅԻԼ ՊԷԿՍ, ՏԱԹԼՈՒ ՊԷԿՍ, ՍԻՐՁԱՅ ՊԷԿՍ, ՄԵԼՔՈՒՄ ՊԷԿՍ, ՊԷԿՍ, ՍԱՅՐ ՄԵՐ ԽԱՆՈՒՄԱՂԷՍ՝ ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ՄԷԼԻՔ ՊԷԿԻՆ[48]:

Այս արձանագրության ծանոթագրության մեջ նշվում է, որ «Մյուս կողմից՝ թիկունքի արձանագրության սկզբի թվականը՝ ՌՃԻԷ: ուղղել են: ՌԻԷ: (1578), որը ճիշտ է: Ավելորդ հարյուրավորը պետք է համարել փորագրողի սխալմունք»[49]:

Մեր կարծիքով այս նկատառումը ճիշտ չէ, այլ ճիշտ է վիմագրի վերը նշված 1678 թվականը, և խոսքը Աստվածաթովին 1656թ. հաջորդած նրա որդի Մելիք Բեկի մասին է, որը ևս Մելիք Շահնազար անունով որդի է ունեցել: Իսկ Մելիք Շահնազար Ա-ի մոր անունը, հակառակ վերոհիշյալ արձանագրության, մեկ այլ տեղ նշվում է Ֆախրական[50] կամ Ֆախրաջահան[51]:

Մեզ հայտնի պարսկերեն վավերագրերում որևէ տվյալ չկա 1656-1708թթ. Գեղարքունիքի մելիքների մասին: Սիայն 1708-9թթ. երկու պարսկալեզու վավերագրերով հաստատվում է Գեղարքունիքի վերը նշված գյուղերի պատկանելությունը «Մելիք Շավուրի որդի Մելիք Բեկի որդի Մելիք Շահնազարին»[52]:

Շահ Սուլթան Հուսեյնի 1709թ. մայիսի 11-ից – հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում հրապարակված հրամանագիրը հաստա-

տում է Մելիք Աստվածաբովի որդի Մելիք Բեկի թոռ Մելիք Բեկի մելիքական իրավունքները Գեղարքունիքի մահալում[53]:

Մատենադարանի Մելիք-Շահնազարյանների ֆոնդում պահվող հրովարտակներից մեկը տրված է վերոհիշյալ Մելիք Միանսարի (կամ Մեհասարի) անունով: Այդ հրովարտակի ձախ եզրը, ներառյալ նաև թվականը, վնասված է: Սակայն հասկացվում է հետևյալը, որ Նադիր շահն այդ հրովարտակը Գեղարքունիքի մելիքին է հղել թուրքերի դեմ դեպի Արարատյան դաշտը ձեռնարկած արշավանքի ընթացքում, որը տեղի է ունեցել 1735թ.: Այդ հրովարտակով շահը պահանջում էր Գեղամա մելիքի հավատարմությունը և թուրքական կայազորների դիրքերի հետախուզման հարցում նրա լրտեսների գործնական օժանդակությունը՝ խոստանալով դրա դիմաց ականջ չդնել «մելիքի դեմ չարախոսներին» ու կարգավորել նրա խնդիրները[54]:

1726թ. մի ռուսերեն փաստաթղթում Գեղարքունիքի ու Ղաբաբաղի մելիքների շարքում հիշատակվում է Մելիք Շահնազարի որդի Մելիք Սարգիսջանի ու Մեհասարի անունները, որը հիմնավորում է պարսկալեզու հրովարտակի վկայությունը այն մասին, որ XVIII դարի 20-ական 30-ական թվականներին Գեղարքունիքի մելիք էր Մելիք-Շահնազարյանների ժառանգ Մելիք Միանսարը (կամ Մեհասար)[55]: Այդ փաստաթուղթը Ջրաբերդի ու Գեղարքունիքի ավագների դիմումն է հղված Ռուսաստանի կայսերը, ուրով խնդրում են նրա հովանավորությունը և հայտնում նրա ներկայացուցիչ Իվան Կարապետին իրենց հնազանդության մասին:

Մատենադարանի ձեռագրերից մեկում[56] տվյալներ կան Մելիք-Շահնազարյանների տոհմի XVIII դարի կեսերի (Նադիրի ժամանակաշրջանի) այլ ներկայացուցիչների մասին: Մասնավորապես, նշվում է, որ այդ տոհմից էր սերել Երևանի նահանգի մելիք քալանթար[57] Մելիքջանը (հայր Մանուչարի): Աբրահամ Կրեսացին ևս իր «Պատմության» մեջ անդրադառնալով Նադիր շահի օրոք տեղի ունեցող դեպքերին՝ բազմիցս նշում է Երևանի նահանգի քալանթար Մելիքջանի անունը[58]: Վերջինս թեև Նադիր շահին մեծ օժանդակություն է ցուցաբերում Ահմեդ փաշայի զորքերի դեմ իր արշավանքի ընթացքում, սակայն հետագայում սպանվում է Նադիրի հրամանով[59]: Այնուամենայնիվ Նադիր շահը գոջալով նրա սպանության համար՝ որպես փոխհատուցում, նրա որդի Մանուչարին է հանձնում հոր պաշտոնը և նշանակում 250 թուման տարեկան ռոճիկ. «Եւ նմա իշխանութիւն ունել ընդ ինքեան զդահիճ, զբանդ և զշղթայս և անուանեց զնա միրիմիրան կամ պէյլերպէյի 'ի վերայ Արարատեան երկրի և մասին ու Միւնեաց: Եւ այնուհետև այնքան սիրեաց զնա, որ 'ի գնալն իւր ի Հնդիկս տարաւ և զՄանիչար»[60]:

Սակայն շուտով այս Մանուչարը իր նկատմամբ Նադիր շահի անվստահությունը զգալով՝ փախուստի է դիմում դեպի Կարին, «ուր ընկալեալ եղեւ ի բդեշխէ տեղւոյն որ էր Հէքիմ օղլու բաշի փաշայեն»: Նա-

դիրը նրան հրովարտակով ետ է կանչում՝ ներում խոստանալով, բայց պարսից տելի իշխանությունների կողմից նա դավաճանաբար սպանվում է»:

Այս փաստաթղթերը վկայում են Գեղարքունիքի մելիքական տան իշխանության շարունակականության մասին, որը չնայած ժամանակների վայրիվերումներին ու իշխանական փոփոխություններին, նրա ներկայացուցիչների քաղաքական ճկունության շնորհիվ գոյատևում է XVI-ից մինչև XVIII դարերը:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի
Մելիք-Շահնազարյանների ֆոնդի պարսկերեն վավերագրերը[62]

1. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 18, էջեր 31-45, բնագիր, մեծ. 35 x 21 սմ: Սիր Դավիթ Մելիք-Շահնազարյան-Շապուրյանի կողմից 1828թ. մարտի 6-ին Թավրիզում գրված խնդրագիրն է գեներալ-ֆելդմարշալ կոմս Ի. Ֆ. Պասկևիչին, որով խնդրում է թույլ տալ անցնել Ռուսաստանի տարածքները և ընդունելով ռուսական հպատակություն՝ ստանալ Գեղարքունիքում գտնվող իր տոհմական կալվածքները, որոնք ձգվում են արևելքում Թուխլիջե գյուղից մինչև Մազրա, և այնտեղից մինչև Ղոթ, ներառյալ Մեծ Ենգիջա, Ամրսադ, Միրաբաղ, Մազար, Գյուրջի Վերան, Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Աբաք, Ղանդուլեղդաբա (պետք է լինի Ղարանլուղդարա) գյուղերը, որոնք Ֆաթհալի շահի ու նրա թագաժառանգ Աբաս Միրզայի հրամանագրերով իրեն էին հանձնվել, և այդ առթիվ Կովկասի նախկին նահանգապետ Ա. Երմոլովի հետ բանակցություններ են վարվել, սակայն ռուս-իրանական սահմանների անկայունության պատճառով իրեն չեն հանձնվել:
2. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 21, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ և 1 հայատառ կնիքներով, մեծ. 21 x 29.5 սմ: Սեֆյան շահ Թահմասպ Ա-ի 944 հ. թ. ռամազան ամսի (1538թ. փետրվարի 1- մարտի 3) հրամանագիրն է, որը հաստատում է Գեղարքունիքի Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Միրաբաղ, Գյուրջի Վերան և Ամրսադ գյուղերի մուլքային պատկանելությունը Մելիք Բեկին[63]:
3. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 23, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ և 1 հայատառ կնիքներով, մեծ. 21 x 30 սմ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1012 հ. թ. ջումադի առաջին ամսի (1604թ. սեպտեմբերի 25 – հոկտեմբերի 25) հրովարտակն է, որով շահը պահանջում է Մելիք Շահնազարից նվիրվածություն ցուցաբերել իրեն ծառայելու հար-

ցում, քանի որ նա գրված լինելով Ատրպատականը և նրա կենտրոն Թավրիզը, մտադիր էր արշավանքով նվաճել Երևանն ու Նախիջևանը, որից հետո խոստանում էր հավատարմության դիմաց նրան արքայական առատաձեռնությամբ վարձատրել[64]:

4. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 25, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ կնիքներով, մեծ. 29.5 x 41 սմ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1019 հ. թ. ռամազան ամսի (1610թ. նոյեմբերի 17 - դեկտեմբերի 17-ը) հրովարտակն է, որով Գեղարքունիքի մելիքությունը Մելիք Յավրիի մահից հետո շնորհվում է Մելիք Քյամալին՝:
5. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 27, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ և 1 հայատառ կնիքներով, մեծ. 43 x 30 սմ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1013 հ. թ. զի հեջջե ամսի (1605թ. ապրիլի 20 – մայիսի 19) հրովարտակն է, որով թշնամիների դեմ մղած պատերազմում գործած քաջագործությունների դիմաց Մելիք Քյամալին է շնորհվում Նախիջևանի թումանի մեջ մտնող Զառուգիբիլ նահանգի Ղարասաղալ գյուղից մալոջահաթ[66] ու թաֆավութ-ե ջիզյա[67] հարկերի գանձման իրավունքը և ազատում այդ գյուղը ինխրաջաթ[68] ու ավարիզաթ[69] հարկերից[70]:
6. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 29, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ և 1 հայատառ կնիքնիրով, մեծ. 21 x 29 սմ: Սեֆյան շահ Աբաս Ա-ի 1014 հ. թ. ջումադի առաջին ամսի (1605թ. սեպտեմբերի 14 – հոկտեմբերի 14-ը) հրամանագիրն է, որով կարգադրվում է շահական բոլոր պաշտոնյաներին (մեծ ամիրներ, դարչիներ, խասսե-ե շարիֆեի դպամներ և այլն) Գեղարքունիքից բերված գերիներին հանձնել Յավրի Բեկին, որովհետև այնտեղի բոլոր գերիներին ներում է շնորհվում և հրամանի կատարման պատասխանատվությունը դրվում է Սեհդի Ղուլի Բեկ Ղորչիի վրա[71]:
7. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 31, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված է 3 արաբատառ կնիքներով, մեծ. 30 x 43 սմ: Սեֆյան շահ Սեֆի Ա-ի 1046 հ. թ. սաֆաբ ամսի (1636թ. հուլիսի 5 – օգոստոսի 3) հրովարտակն է, որով Մելիք Աստվածաբովը (Շափուրը) վերահաստատվում է Գեղարքունիքի մելիքի պաշտոնում[72]:
8. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 33, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված 2 արաբատառ կնիքներով, մեծ. 29.5 x 43 սմ: Երևանի շար'ի դատարանի 1120 հ. թ. շա'բան ամսի (1708թ. հոկտեմբերի 16 – նոյեմբերի 14) արձանագրությունը, ըստ որի 18 հեղինակավոր անձանց վկայությունը

ների ու փաստաթղթերի հիման վրա հաստատվում է Ղանդուլեղդարա (պետք է լինի Ղարանլուղդարա) գյուղի և Գեղարքունիքի Դրախտիկ (Թուխլիջա) գյուղից մինչև Մազրա, և այնտեղից մինչև Աղիյաման (Ղոթ) ընկած (Այթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Սիրաբաղ, Գյուրջի Վերան և Ամրսաղ) գյուղերի պատկանելությունը Մելիք Բեկի ու Մելիք Շահնազարի տոհմին և ժառանգաբար փոխանցվել է Մելիք Շափուբի որդի Մելիք Բեկի որդի Մելիք Շահնազարին և նրա հորեղբորորդի Սիրզաջանին, որը Մպահանում է գտնվում՝ հանդիսանալով շահի պալատականը: Ուստի այն պետք է ետ վերցվի նրան ապօրինաբար տեր դարձած Մեհդի Խանից և 5 տարվա ապօրինի տնօրինման եկամուտների փոխհատուցմամբ[73]:

9. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 35, պատճեն, որի համապատասխանությունը բնագրին հաստատված 3 արաբատառ կնիքներով, մեծ. 21 x 59 սմ: Մելիք Շահնազարի խնդրագրի հիման վրա հրապարակված Սեֆյան շահ Մուլթան Հուսեյնի 1121 հ. թ. մուհարրամ ամսին (1709թ. մարտի 13 - փետրվարի 12) հրամանագիրն է ուղղված Չուխուր Մաաղի ու Ղարաբաղի բեկլարբեկերին և Երևանի շար'ի դատարանին, որ պահանջում է պարզել, թե արդյոք իրո՞ք Ղարանլուղդարա գյուղը պատկանել է Մելիք Շահնազարին և այդ խնդրին արդար լուծում տալ[74]:

10. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 37, պատճեն, առանց որևէ կնիքի, մեծ. 30.5 x 43 սմ: Շար'ի դատարանի 1240 հ. թ. ռամազան ամսի (1825թ. ապրիլի 19 - մայիսի 19) արձանագրությամբ հաստատվում է Գեղարքունիքի Այթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Սիրաբաղ, Գյուրջի Վերան և Ամրսաղ գյուղերի պատկանելությունը Սիրզաջանի թոռ և Ծատուրի որդի Դավիթ խանի տոհմին և Աբաս Սիրզայի հրամանագրով նրան հանձնված լինելը[75]:

11. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 39, պատճեն, հաստատված հայատառ կնիքով, մեծ. 20.5 x 30.5 սմ: Երևանի Հուսեյն խան Մարդարի գրությունն է Դավիթ Մելիք-Շահնազարյանին, որով սարդարը վերջինիս տեղեկացնում է, որ ստանալով նրա խնդրագիրը, դիմել է գեներալ Երմոլովին որպեսզի վերջինս թուլատրի նրա ազգականների 7- 8 ընտանիքներին գնալ, հաստատվել Գեղարքունիքի իրենց նախնիներին պատկանող բնակավայրերում և խոստանում է 300-400 բնակիչ Թուրքիայի տարածքներից գաղթեցնել նրա կալվածքներում բնակեցնելու և դրանք շենացնելու նպատակով[76]:

12. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 41, պատճեն, ստանց որևէ կնիքի, մեծ. 20 x 30սմ: Ֆաթհալի շահ Ղաջարի թագաժառանգ Աբաս Սիրզայի 1240 հ. թ. ջումադի առաջին ամսի

(1824թ. դեկտեմբերի 22 – 1825թ. փետրվարի 21) հրամանագիրն է՝ ուղղված Գեղարքունիքի գեղջավագներին ու մեծատուններին, որով նրանց կարգադրում է հնազանդվել ու ծառայել Դավիթ Խան Մելիք-Շահնազարյանին, որի ժառանգական իրավունքները վերականգնվել են ու նրան է հանձնվել Գեղարքունիքի մելիքությունը[77]:

13. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 43, պատճեն, հաստատված հայատառ կնիքով, մեծ. 41 x 30 սմ: Ֆաթհալի շահ Ղաջարի թագաժառանգ Աբաս Միրզայի 1239 հ. թ. ջումադի առաջին ամսի (1824թ. հունվարի 3 - փետրվարի 2) հրամանագիրն է, որով ելնելով այն հանգամանքից, որ Գեղարքունիքի մահալի կառավարումը շահական հրամանագրերով հանձնված է եղել Շավարի որդի Մելիք Շահնազարին, իսկ Դավիթ խանը նրա ժառանգն է, նրան են հանձնվում նրա պապենական կալվածքները, որոնք են Մեծ Ենգիջա, Ամիրսաղ, Միրաբաղ, Գյուրջիվերան, Ալթունթախտ, Փոքր Աբաք, Փոքր Ենգիջա, Ղանղուլիղդարա (պետք է լինի Ղարանլուղդարա) գյուղերը: Այդ գյուղերի ռայաթներից յուրաքանչյուրը պետական հարկը, որ պետք է վճարվի շահի սարքարին, նշանակվում 1 բաջաղլու (հոլանդական ոսկեդրամ), որից ազատվում են այդ վայրերը նոր գաղթածները[78]:

14. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 44, պատճեն, հաստատված հայատառ կնիքով, մեծ. 33 x 42.5 սմ: Ֆաթհալի շահ Ղաջարի 1241 հ. թ. ռաջաբ ամսի (1826թ. փետրվարի 9 – մարտի 11) հրամանագիրն է, որով հիմնվելով այդ առթիվ թագաժառանգ Աբաս Միրզայի կարգադրությունների վրա վերականգնվում են Դավիթ Խանի ժառանգական իրավունքները Զառուզիբիլ գավառի Ղարասաղալ գյուղի և Գեղարքունիքի Թուխլիջա (Դրախտիկ) գյուղից մինչև Ղոթ (Աղիյաման) գյուղն ընկած կալվածքների նկատմամբ[79]:

15. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 47, պատճեն, առանց որևէ կնիքի 21.5 x 33 սմ: Չուիտուր Սաադի բեկլարբեկ[80] Մուհամմադ Ղուլի խանին ուղղված Երևանի շար'ի դատարանի հանձնակատարի 1062 հ. թ. ռաջաբ ամսի (1652թ. հունիսի 8 – հուլիսի 8) զեկուցագիրը, որը 10 հեղինակավոր անձանց վկայության հիման վրա հաստատում է Ղարանլուղ-դարա գյուղի պատկանելությունը Մելիք Քյամսղի որդի Մելիք Ասաբովին (Աստվածաբով)[81]: Գործին կցված վավերագիր 125-ի պատճենն է:

16. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 51, պատճեն, հաստատված արաբատառ կնիքով, մեծ. 30.5 x 42 սմ: Թավրիզի բեկլարբեկ Ֆաթհալի խանի 1239 հ. թ. ջումադի առաջին ամսի (1824թ. հունվարի 3 - փետրվարի 2) հրամանագիրն է, որով, հիմնվելով շահական հրովարտակների ու շար'ի արձանագրությունների վրա, հաստատվում են Գեղարքունիքի Մեծ Ենգիջա, Ամիրսաղ, Մի-

ռաբադ, Գյուրջիվերան, Ալթունթախտ, Փոքր Արաք, Փոքր Ենգիջա, Ղարանլուդարա գյուղերի պապականելությունը Աստվածաբովի որդի Մելիք Շահնազարի ժառանգ Դավիթ խանին[82]:

17. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 51, պատճեն, մեծ. 29.5 x 42 սմ: Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի 1120 հ. թ. ռաբի՛ առաջին ամսի (1708թ. մայիսի 21 – հունիսի 20) հրամանագիրը, որով Գեղարքունիքի մելիք Մելիք Քյամալի ժառանգներից Մելիք Բեկի թոռ Մելիք Բեկը հաստատվում է Գեղարքունիքի մելիքի պաշտոնում: Գործին կցված վավերագիր 127-ի պատճենն է:

18. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 56, պատճեն, մեծ. 16.5 x 21.5 սմ, գիր՝ շիքասթե - նասքաալիղ: Հայկական Մարզի դատական ատյանին ուղղված Սիրզա Իսմայիլի 1244 հ. թ. ջումադի երկրորդ ամսի (1828թ. դեկտեմբերի 9 – 1829թ. հունվարի 7) զեկուցագիրն այն մասին, որ Երևանի Հուսեյն խան Սարդարը 1241 հ. թ. ռաբի՛ առաջին ամսին (1825թ. հոկտեմբերի 14 – նոյեմբերի 13) Դավիթ Խան Մելիք-Շահնազարյանի խնդրանքով Գեղարքունիքի մահալի մուլքերի տնօրինումը հանձնել էր նրա ազգական Բարսեղին, որպեսզի նա հավաքի այնտեղի մալիքանե[83] հարկը և տրամադրել էր 25 գութան:

19. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 58, բնագիր, մեծ. 21 x 32.5 սմ, գիր՝ շիքասթե - նասքաստղիղ: Երևանի խան Մուհամմադ Հուսեյն Խան սարդարի 1241 հ. թ. ռաբի՛ առաջին ամսի (1825թ. հոկտեմբերի 14 – նոյեմբերի 13) հրամանագիրն է՝ ուղղված Մելիք Բարսեղին, որով նրա հանձնարարվում է գնալ, կառավարել Գեղարքունիքի մահալը և Դավիթ Խանի կալվածքներից գանձել մալիքանեն:

20. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 59, բնագիր, շիքասթե - նասքաստղիղ: 6 անձանց արաբատառ կնիքներով հաստատված երդմնագիր ճշմարտությունն ասելու վերաբերյալ:

21. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 60, բնագիր, շիքասթե: 7 անձանց արաբատառ կնիքներով ու մատնադրոշմներով հաստատված երդմնագիր ճշմարտությունն ասելու վերաբերյալ:

22. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 61, պատճեն, էջեր 91/133-93/138, բնագիր, շիքասթե - նասքաալիղ: 10-ից ավելի հեղինակավոր անձիք վկայություն են տալիս Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի կողմից Մելիք Բարսեղի՝ նրա կալվածքների ժամանակավոր կառավարիչ նշանակված լինելու և այդ պաշտոնում նրա ձեռնարկած գործողությունների մասին:

23. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 101, էջ 178/225, բնագիր, շիքասթե - նասքաալիղ: Վկայագիր հաստատված 10 հոգու կողմից 1248 հ. թ. ջումադի առաջին ամսին (1832թ. սեպտեմ-

բերի 26 – հոկտեմբերի 26), ըստ որի Մելիք Լալամ Մելիք Շահնուզարովը, որ հայտնի է Հաջի Յուսեֆ անունով, և փոքր հասակում որպես գերի Իրան է տարված եղել, իսկ այժմ Թիֆլիսում է բնակվում, Մելիք-Շահնուզարյանների տոհմից է և հանգուցյալ Դավիթ խանի ազգականը:

24. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 123, բնագիր, մեծ. 17 x 31 սմ, գիր՝ շիքասթե - նասքաալիղ: Մեֆյան շահ Աբաս Ա-ի 1013 հ. թ. ջումադի երկրորդ ամսի (1604թ. հոկտեմբերի 25 – նոյեմբերի 23) հրովարտակն է, որ հաստատում է Երևանի նահանգի Խոնջաքլու մահալի Վարսիլ գյուղում գտնվող 2 քարով ջրաղացի պատկանելությունը Բաբա քյադխուդայի ժառանգներին[84] ու քրիստոնյա Ասատուրին, ուստի արգելում է ամեն տեսակի ոտնձգությունները այդ կալվածքի նկատմամբ՝ հանձնարարելով Ամիր Գունե խանին այդ հարցում նրան օրինական օգնություն ցուցաբերել:

25. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 124, բնագիր՝ կիսաքայքայված որի թվականը չի նշմարվում, մեծ. 20 x 32սմ, գիր՝ շիքասթե - նասքաալիղ: Նաղիր շահի հրամանագիրն է հաստատված Գյոքչայի մելիք Մելիք Միանսարին, որով շահը պահանջում է Գեղամա մելիքի հավատարմությունը և թուրքական կայազորների դիրքերի հետախուզման հարցում նրա լրտեսների գործնական օժանդակությունը՝ խոստանալով դրա դիմաց ականջ չդնել «մելիքի դեմ չարախոսողներին» ու կարգավորել նրա խնդիրները:

26. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 125, բնագիր, մեծ. 20 x 29.5 սմ, գիր՝ շիքասթե - նասքաալիղ: Չուխուր Սաադի բեկլարբեկ Մուհամմադ Ղուլի խանին ուղղված Երևանի շար'ի դատարանի հանձնակատարի 1062 հ. թ. ռաջաբ ամսի (1652թ. հունիսի 8 – հուլիսի 8) զեկուցագիրը, որը 10 հեղինակավոր անձանց վկայության հիման վրա հաստատում է Ղարանլուղ-դարա գյուղի պատկանելությունը Մելիք Քյամալի որդի Մելիք Ասաբովին (Աստվածաբով):

27. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 126, բնագիր, մեծ. 23 x 57 սմ, գիր՝ նասքաալիղ: Մեֆյան շահ Աբաս Ա-ի 1030 հ. թ. ջումադի առաջին ամսի (1621թ. մարտի 24 – հունիսի 23) հրովարտակն է, որը Մելիք Քյամալից հետո Գեղարքունիքի մելիքի պաշտոնում հաստատում է նրա ժառանգ Մելիք Աստվածաբովին:

28. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 127, բնագիր, մեծ. 29 x 66սմ, գիր՝ նասքաալիղ: Մեֆյան շահ Մուլթան Հուսեյնի կողմից 1121 հ.թ. ռաբի՝ առաջին ամսին (1709թ. մայիսի 11 – հունիսի 10) հրապարակված հրովարտակը, որով Գյոքչա մահալի մելիքությունը հանձնվում է Մելիք Քյամալի ժառանգներից Մելիք Բեկի թոռ Մելիք Բեկին:

29. Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 136, պատճեն: Ծատուրի որդի Հարությունն և Ալլահերդիի որդիներ Միանսարի ու Եղիայի 1823թ. երդմնագիրը, ըստ որի նրանք Դավիթ խան Մելիք-Շահնազարյանի ազգականներն են և հետևաբար նրա ժառանգները:

Թարգմանություն

Մատենադարան, Մելիք Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 126, բնագիր, մեծ. 23.5 x 57.5, գիր՝ շիքասթե-նասթալիղ

Շահ Աբաս Ա-ի կնիքը. «Սրբության շահի ծառա Աբաս 999, թող Ալլահն օրհնի Նաբիին, Վասիին, Բաթուլին, Մաջջադի երկու թոռներին, Բաղերի, Մադեղին, Քազեմին, Ռեզային, Թաղիին, Նաղիին, Ասքյարիին և Մեհդիին»[85]

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև արեգակնային բարձրությունն ունեցող աշխարհասաստ հրամանագրով Գյոքչայի օլքայի[86] մելիքությունը շնորհվել էր Գյոքչայի մելիք Մելիք Քյամալին: Այս կապակցությամբ հիշյալ Մելիք Քյամալի որդի Ուշաքովը (Աստվածաքով) թագավորանիստ դրախտային Ֆախրաբադում, ներկայանալով աշխարհի ապավենի պալատը, տեղեկացրեց, որ իր հայր Մելիք Քյամալը, մահացել է, ու բոլոր ռայաթները[87] նրա լավ վարվելակերպից գոհ ու շնորհակալ են: Հետևաբար կարգադրեցինք, որպեսզի իշխանության հանգրվան, Չուխուր Սաադի բեկլլարբեկ ու վսեմաշուք կառավարիչ Ամիր Գունա խան Սարու Ասլանը պարզի իրողությունը և, եթե հպատակները [իսկապես] Ուշաքովի վերաբերմունքից գոհ են ու նրան հնազանդ, ապա թող վերջինս իր հոր նման սաանձնի այդ գործն ու նրա պարտականությունները՝ արդարություն հաստատի ու ռայաթների հետ արդարացի վարվի, այնպես, որ ապօրինի յուրացումներ ու բռնություններ տեղի չունենան: Եվ թող նշված օլքայի քյադխուդաները, ռայաթներն ու մյուս բնակիչները վերջինիս իր հոր նման իրենց մելիք ու ավագ ճանաչեն, նրա օրինական խոսքին ու կամքին չհակառակվեն, առանց նրա իմացության առևտուր չանեն, նրան վերապահեն այդ պաշտոնի պարտականությունները: Եվ թող հիշյալ մելիքը մեծ ջանքեր գործադրի այդ օլքայի բարեշենությունը, նրա խեղճերի ու ռայաթների անդորրը ապահովելու համար որպեսզի մեր արքայական մեծությունը բարի օրհնանքի արժանանա: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն, նրան չհակառակվեն և ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն:

Գրվեց 1030թ. ջումադի առաջին ամսին:

[Հակառակ կողմում]

Իշխանության ու վեզիրության հանգրվան, Նորին Մեծության մերձավոր պալատական, ղուլամների[88] վեզիր[89], խասսե-ե շարիֆեի[90] մաջլեսնևիս[91] Սիր Աբու Ալիի գրության հիման վրա, որ գրվել է բարձրագույն հրամանով՝ ներառելով Մելիք Քյամալին տրված նախկին հրամանագիրը:

[مهر شاه عباس]: بندهٔ شاه ولایت عباس ۹۹۹، اللهم صل علی النبی و الوصی و البتول و السبطین و السجاد و الباقر و الصادق و الکاظم و الرضا و التقی و النقی و الزکی و المهدی

فرمان همایون شد آنکه چون حسب الحکم جهانمطاع آفتاب ارتفاع ماکی الکاء گوکچه به ۱۰۴۱، کمال گوکچه مرجوع و متعلق بوده و درینولا ملک اوشابو ولد ۱۰۴۱، کمال مذکور در دارالسلطنهٔ فرحاباد جنت آباد بدرگاه جهان پناه آمده بعرض اشرف رسانید که ۱۰۴۱، کمال والد او فوت شده و همگی رعایا از حسن سلوک او راضی و شاکر اند بنابرین مقرر فرمودیم که ایالت و حکومت پناه شوکت دستگاه نظامالایالة امیر گونه خان ساروامصلان بیگاربیگی چخورسعد بحقیقت رسیده چون رعایا از سلوک ملک اوشابو مذکور راضی و تسلی باشند مشارالیه بدستور والد بامر مذکور و لوازم ان قیام و اقدام نموده کمال سویت و راستی و راست قلمی در میانهٔ رعایا مرعی داشته چنان نماید که حیف و میل و ستمشریکی در میانه آیشان واقع نشود کدخدایان و رعایا و سکنهٔ الکاء مذکور مشارالیه را بدستور والد ملک و ریش سفید خود دانسته از سخن و صلاح حسابی او بیرون نروند و بیوقوف و شعور او داد و ستد نازنمایند و لوازم امر مذکور را مخصوص او شناسند ملک مزبور در ابادانی و معموری الکاء مذکور و ترفیه حال عجره و رعایا سعی موفور بظهور آورده دعای خیر جهت ثواب همایون ما حاصل نماید درینباب قدغن دانسته از فرموده تخلف نورزد و هر ساله حکم مجدد طلب ندارند.

تحریراً فی جمادی الاول سنة ۱۰۳۰.

[ظهر]

از قرار نوشتهٔ سیادت و وزارت پناه معالی دستگاه مقرب الحضرة میر ابو العالی وزیر علامان و مجلس نویس خاصهٔ شریفه که بر ضمن حکم سابق ملک کمال نوشته که حسب الامر اعلی مقرر شده.

ՄՊ 241/241-1 127



Մատենադարան, Մելիք Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավերագիր 127, բնագիր մեծ. 29 x 66սմ, գիր՝ նասքալիդ

Իշխանությունն Ալլահինն է:

[Շահ Մուլթան Հուսեյնի կնիքը]. «Սրբության շահի ծառա Մուլթան Հուսեյնն է 1112; հանուն Ալլահի, թող Ալլահն օրհնի Նաբի Մուհամմադ Մուսթաֆային, Մուրթազա Ալիին, Ֆաթիմային, երկու թոռներին՝ Հասանին ու Հուսեյնին, Ալիին, Մուհամմադին, Ջահֆարին, Մուսային, Ալիին, Մուհամմադին, Ալիին և Մահեբ ազ-Զաման Հասանին»[92]

Արքայական հրովարտակ հրապարակվեց հետևյալի մասին.

Որովհետև օրերս Մելիք Բեկը տեղեկացրեց, որ նա Գյոքչա Դենգիզի նախկին մելիք Մելիք Քյամսղի ժառանգներից Մելիք Բեկի թոռն է, և քանի որ դրախտաբնակ միապետների հրամանագրերով նշված մահալի մելիքությունը տրված է եղել իր պապերին իրենց ծառայությունների դիմաց: Բոլոր ռայաթները գոհ են նրա լավ վերաբերմունքից: Ուստի խնդրեց, որ այդ գործը իրեն հանձնվի: Ազերբայջանի ավարեջեի սարքարությունից հաստատեցին, որ Ոչխարի տարվա սկզբից, որ համապատասխանում է 1067[93] թվականին Գյոքչա մահալի մելիքությունը տրված է եղել Ուշաբովի որդի Մելիք Բեկին: Դրանից հետո որևէ հակասող փաստաթուղթ չի հասել հիշյալ սարքարին՞: Ուստի կարգադրեցինք, որպեսզի Չուխուր Մաադի օլքայի բարձրաստիճան բեկլաբեկը վերահասու լինի նշված իրողությանը և եթե նշված չորս դանգերի՞՝ ռայաթները գոհ են նրա մելիքությունից, Սկան տարվա 4-րդ ամսի սկզբից թող ստանձնի այն՝ արդարություն ու անդորր հաստատելով իր ռայաթների շրջանում և այնպես անելով, որ որևէ անօրինականություն ու բռնություն տեղի չունենա: Նշված օլքայի քյաղխուդաները, ռայաթներն ու մյուս բնակիչները թող նրան ինչպես նախկին մելիքին, իրենց մելիք ու ավագ ճանաչեն, նրա օրինական խոսքին ու կամքին չհակառակվեն, առանց նրա գիտության առքուվաճառքի գործարքներ չկնքեն՝ նրան վերապահելով իր պաշտոնի իրավունքները: Նշված մելիքի պարտականությունն է մեծ ջանքեր թափել այդ մահալի բարգավաճման, շենացման, [այնտեղի] ռայաթների ու խեղճերի հանգստության ապահովման համար, որպեսզի օրհնանքի արժանանա: Եվ թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1121թ. ռաբի՝ առաջին ամսին:

[Հակառակ կողմում]

Վեզիրության, փառքի ու բախտի հանգրվան, փառահեղ ու վսեմաշուք, խալիֆայական տերության հզոր հենասյուն, հարատևող հզո-

ռությունն ունեցող պետության ամուր հիմք, միապետական ահեղ թագավորության հենարան, իմաստուն ու բարձրաստիճան էէթեմադ-ուդ-դովլեի[96] գրության հիման վրա: 1) Արքայական կնիքի դրոշմը, [կնիք]. «Արքայական կնիքի դրոշմը»; 2) Ապավինում եմ Ալլահին..., [կնիք]. «Չկա աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը»; 3) բարձրագույն կնիքի դրոշմը, [կնիք]; 4) զննվեց; գրվեց, [կնիք]; 4) գրանցվեց սարխաթի դաֆթարում[97], [կնիք]. «Ապավինում եմ Ալլահին...»; 5) այքի անցկացվեց, [կնիք]. «Մուհամմադ Թաղի»; 6) ճիշտ է, [կնիք]; 7) գրանցվեց դաֆթարդարի կողմից, [կնիք]. «Մուհամմադի տոհմի ծառա Հաշեմ»; 8) գրանցվեց ռուզնամչեում[98]:

الملک لله

[مهر شاه سلطان حسین الله بنده شاه ولایت حسین ۱۱۱۲، جانب هر
که باعلی نه نکو است، هر که گوباش من ندارم دوست، هر که چون خاک
نیست بر در او اگر فرسته است خاک بر سر او

فرمان همایون شد آنکه چون درینوقت ملک بیگ بعرض رسانید که نوادهٔ
ملک بیگ من اولاد ملک کمال ملک سابق کوکچه دنگیر است و حسب
الاحکام سلاطین جنت مکین ملکی مزبور بازاء حقوق خدمات بابا و
اجداد او مرجوع بوده و همگی رعایا از حسن سلوک مشارالیه راضی اند و
استدعاء نمود که خدمت مزبور بمشارالیه مرجوع شود و از سرکار اوارجه
آذربایجان تصدیق نمودند که ملکی محال کوکچه از ابتداء تخاقوی ئیل
مطابق ۱۰۶۷ بملک بیگ ولد اوشابو مرجوع شده و سند تفویضی بعد از
آن بسرکارمزبور نرسیده بنابرین مقرر فرمودیم که عالیجاه بیگنربیگی
الکاء چخورسعد بحقیقت رسیده هر گاه چهار دانگ رعایا از ملکی مشارالیه
راضی باشند از ابتداء چهارماهه سیچقان ئیل بامر مزبور و لوازم آن قیام و
اقدام نموده کمال سویت و راستی و راستقامی در میانهٔ رعایا مرعی داشته
چنان نماید که حیف و میل و ستمشریکی در میانهٔ ایشان واقع نشود
کدخدایان و رعایا و سکنهٔ الکاء مذکور مشارالیه را بدستور ملک سابق ملک
و ریش سفید خود دانسته از سخن و صلاح حسابی او بیرون نروند و
بیوقوف و شعور او داد و ستد ننمایند و لوازم امر مزبور را مخصوص او
شناسند. وظیفهٔ ملک مزبور انکه در آبادانی و معموری محالمزبور و ترفیه
حال عجزه و رعایا سعی موفور بظهور آورده دعای خیر حاصل نماید و در
عهده شناسند.
تحریراً فی شهر ربیع الاولی سنهٔ ۱۱۲۱.

[ظهر]

از قرار نوشتهٔ وزارت و شوکت و اقبال پناه عظمت و حشمت و اجلال دستگاه

نهایت و ایالت پناه رکن اعظم جلالت بنیان بانه افخم سریر سلطنت نشان
عالیجاه اعتضاد السلطنه الیه السلطانیه اصفهانی اعتماد الدوله الامایه
العالیه الخاقانیه.

۱) ثبت مهر همایون شد، [مهر] : ثبت مهر همایون،

۲) توکلت علی الله [مهر] : لا اله الا الله الملک الحق المبین...،

۳) ثبت مهر اشرف شد، [مهر]،

۴) ملاحظه شد،

۵) در روزنامجه عمل شد،

۶) عمل شد، صح،

۷) تقید دفتردار شد، [مهر] : بندهٔ آل محمد، هاشم

۸) صح، [مهر]،

۹) بنظر رسید، [مهر] : ...محمد، تقی،

۱۰) نوشته شد [مهر]،

۱۱) ثبت دفتر شرح شد، [مهر] : افوض امری الی الله عبد...،

KRISTINE KOSTIKYAN

ON THE HISTORY OF MELIK-SHAHNAZARYANS, THE MELIKS OF GEGHARKUNI

The article deals with the facts referring to the history of Melik-Shahnazaryans, the meliks of Gegharkuni region of Armenia, on the basis of data found in Persian documents attached to the personal file compiled in eonnection with the prosecution of Davit Khan Melik-Shahnazaryan at the beginning of 19th century. Author represents new details in the biography of Davit Khan Melik-Shahnazaryan, the 19th century representative of the old noble family. Davit Khan being an outstanding figure in the court of the Crown prince Abbas Mirza, and playing part in the diplomatic relations between Persian government and Napoleon, the Emperor of France, also in the relations of the Persian rulers with Armenian high Clergymen, had gotten decrees confirming his hereditary rights on the estates of his ancestors in Gegharkuni. He made great efforts to have these estates in the period from 1828 to 1831, when it was already under the rule of Russian Emperor, and he passed through long and unsuccessful legal proceedings during which the file mentioned above was compiled.

Author makes some corrections and supplements in succession of the meliks of Gegharkuni and historical facts referring to them in 17th-18th centuries through the study of the Persian documents attached to the file, in comparison with the data survived in other sources (inscriptions, Armenian manuscripts and documents). The article represents also the brief descriptions and contents of the Persian documents of the file 1, kept in the Archive of Melik-Shahnazaryans in Yerevan Matenadaran, and the Persian texts and Armenian translations of two of these documents: the decree of Shah Abbas I issued in 1621 to confirm the meliki rights of Melik Astvatsabov Melik-

Shahnazaryan of Gegharkuni; the decree of Shah Sultan Husayn dated 1709 and confirming the rights of Melik Beg. another descendant of the same family.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կ. Տեր-Մկրտչյան, Դօփեանք և Մելիք-Շահնազարեանք, «Նիւթեր հայ մելիքուրեան մասին», պրակ Բ, Ս. Էջմիածին, 1914 և Մ. Մմբատեանց, Նկարագիր ծովազարդ գաւառին Գեղարքունու, Վաղարշապատ, 1895, որտեղ ընդարձակ տեղ է հատկացված նրանց վերաբերող վիմագրական, բանահյուսական և այլ տեղեկությունների շարադրմանը, ինչպես նաև թարգմանաբար ներկայացված են այդ տոհմի ներկայացուցիչներին պարսից շահերի կողմից տրված մի շարք հրովարտակներ; Գ. Շերմազանյան, Նիւթեր ազգային պատմութեան համար. Երեւելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890:
2. Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Մելիք Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1-4:
3. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, գործ 1, վավ. 43, 49:
4. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, գործ 1, վավ. 33:
5. Պատճեններում այս գյուղը հիմնականում նշվում է Ղանդուլեղդարա ձևով, որը սխալ է: Վերին և Ներքին Ղարանլուղդարա բնակավայրերը նշվում են Շոպենի կողմից Երևանի մարզի Գյոքչա մահալում (И. Шопен, Исторический памятник Армянской области в эпоху ея присоединения к Российской империи, СПб. 1852, с. 496):
6. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 37,
7. Գ. Շերմազանյան, Նիւթեր ազգային պատմութեան համար. Երեւելի հայկազունք ի Պարսկաստան, Ռոստով, 1890, էջ 124-125:
8. Գ. Շերմազանյան, նշվ. աշխ., էջ 119-120:
9. Myr Davoud Zadour de Melik Schahnazar, Notices sur L'Etat Actuel Dela Perse, Paris 1818.
10. Գ. Շերմազանյան, նշվ. աշխ., էջ 122:
11. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 43, 44; Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 701:
12. Кавказский сборник, т. 21, Тифлис 1900, с. 1-2, 12, 14-42.
13. Գ. Շերմազանյան, նշվ. աշխ., էջ 122-123:
14. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 730, 731, 742:
15. Շարʼ - شرع - Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի բարձրաստիճան հոգևորականները (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 117):
16. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1հ, վավ. 745:
17. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 18:
18. Նույն տեղում:
19. Նախկին Դրախտիկ գյուղն է, որը Ի. Շոպենը XIX դարում նշում է Երևանի մարզի Գյոգչա մահալի բնակավայրերի թվում (И. Шопен, Исторический - памятник Армянской области в эпоху ея присоединения к Российской империи, СПб. 1852, с. 506):

20. Մեծ և Փոքր Մազրա գյուղերը XIX դարում հիշատակվում են Երևանի մարզի Գյոգչա մահալի բնակավայրերի թվում (И. Шопен, ук. соч., с. 500):
21. Կոթը Գեղարքունիքի ներկայիս Ներքին Գետաշեն գյուղի հին անվանումն է: Այդ գյուղը կոչվել է նաև Աղիեաման:
22. Մեծ Ենգիջա գյուղն ըստ Մ. Սմբատյանցի հետագայում կոչվել է Էրքեջի (Երքեաջ), ապա՝ Վերին Ատիեաման (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 808), իսկ այժմ այն կոչվում է Վերին Գետաշեն:
23. Մ. Սմբատյանցը որպես Ամարսաք գյուղի հետագա անվանումներ նշում է Ամրբարը և Աղալաղալուն (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 808); վերջինս "Абдуль-агали" ձևով հիշատակում է Ի. Շոպենը Երևանի մարզի բնակավայրերի թվում (И. Шопен, ук. соч., с. 485):
24. Գեղարքունիքի ներկայիս Մարտունու շրջանի Թազագյուղ բնակավայրի հին անվանումն է, որի անվանումների թվում Մ. Սմբատյանցը նշում է Բալախատափը, ապա Նորագյուղը (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 808):
25. Որպես Մազար գյուղի հետագա անվանում Մ. Սմբատյանցը նշում է Ծակ քարը (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 808):
26. Գյուրջի վերան գյուղն ըստ Մ. Սմբատյանցի հետագայում կոչվել է Վրացաշեն, ապա՝ Ալիղրաղ (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 808); այդ գյուղի ներկայիս անունն է Աստղաձոր:
27. Ի. Շոպենը հիշատակում է Վերին և Ներքին Ալթուն-թախթ գյուղերը Երևանի մարզի Գյոգչա մահալում (И. Шопен, ук. соч., с. 488): Մ. Սմբատյանցը նշում է, որ այդ գյուղը, որի անունը հետագայում չէր փոփոխվել, իր ժամանակներում ավերակ էր (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 808):
28. Ըստ Մ. Սմբատյանցի Փոքր Ենգիջա գյուղի հետագա անվանումն էր Քթափոր, այնուհետև՝ Վերին Ղարախլլխ (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 808):
29. Փոքր Արաք գյուղը հետագայում կոչվել է Կարմիր քար, այնուհետև՝ Զոլախաչ (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 808):
30. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 727:
31. Գեղարքունիքի շրջանը: Մահալ - محل - Շրջան, գավառ, XVII-XIX դարերում Անդրկովկասի վարչական բաժանման միավորներից է:
32. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 58:
33. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 39:
34. Գ. Շերմազանյան, նշվ. աշխ., էջ 125:
35. Նույն տեղում, էջ 126:
36. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 91, 92, 93:
37. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 101, 136:
38. Մուլք - ملك - սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ այլ անշարժ կալված (Հ. Դ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ I, Երևան, 1956, էջ 115):
39. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա (1601-1620թթ.), Երևան, 1974, էջ 219:
40. Նույն տեղում:

41. Մելիք Քյամալը մահացել է 1621թ. (Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Երևան 1973, էջ 342):
42. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ I, վավ. 126:
43. Պարսկերեն վավերագրերում նրա անունը հիշատակվում է Ուշարով կամ Ուսաբով ձևերով:
44. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, Երևան, 1974, էջ 219:
45. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ I, վավ. 125:
46. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, Երևան, 1984, էջ 775:
47. Դիվան հայ վիմագրության, պրակ IV, էջ 291:
48. Նույն տեղում, էջ 339:
49. Նույն տեղում:
50. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 219:
51. Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 809:
52. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 33, 35:
53. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 127:
54. ՄՄ, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ 124.
55. Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. 2, ч. II, Ереван, 1967, с. 283.
56. Հովհ. Մելիք-Սելիմյանց Զմյուռնիացի, Համառոտութիւն պատմութեան Հայկազանց, ՄՄ, ձեռագիր 2888, էջ 341բ:
57. Քալանթար – كلانتر - Այսպես էին կոչվում քաղաքագլուխները, որոնք զբաղվում էին բնակչության քաղաքացիական հարցերով և հետևում էին քաղաքի հասարակական գործերին: Սրանք սովորաբար ընտրվում էին քաղաքի մեծահարուստ վաճառականների կամ խոջաների շարքերից (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 122):
58. Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973, էջ 49, 80, 128:
59. Հովհ. Մելիք-Սելիմյանց Զմյուռնիացի, նշվ. աշխ, էջ 342ա:
60. Նույն տեղում:
61. Նույն տեղում, էջ 669:
62. Պարսկերեն վավերագրերին կցված են նրանց ռուսերեն թարգմանությունները, որոնցում սխալներ են հանդիպում:
63. Այս հրովարտակի հայերեն թարգմանական տարբերակը տե՛ս Մ. Սմբատյանցի աշխատությունում, որտեղ սակայն թվականը նշված է 966 հ. թ., (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 784):
64. Տե՛ս նաև Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 785 – 6:
65. Նույն տեղում, էջ 788-790:
66. Մալոջահաթ - مالوجهات – Տերմինը կազմված է «մալ» (ապրանք, հարստություն) և «ջահաթ» (կողմեր, վայրեր, վարելահողեր) բառերից: «Մալ»-ը սեփականության հարկն էր, իսկ «ջահաթ»-ը գյուղի վարելահողերից գանձվող հողային հարկը: Այս երկու հարկերը միշտ միատեղ էին հաշվվում և ընդհանուր գումարով գանձվում գյուղական համայնքից: Մալոջահաթը բնակչությունից գանձվող ռենտա-հարկի մեծ մասն էր կազմում և մի անգամ որոշված լինելով անխախտ չափերով գանձվում էր ռայաթներից: Դրա համար էլ, շատ հա-

ճախ այս անվան տակ հասկանում էին տվյալ օբյեկտից գանձվող նաև այլ հարկերը, այս դեպքում «մալոջհաթ» տերմինը դիտվում էր որպես հավաքական հարկային տերմին (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 112-113):

67. Թաֆավութ-ե ջիգյա - تفاوت جزیه - Բառացի՝ «ջիգյայի տարբերություն»: Հայերից գանձվող գլխահարկի կամ «ջիզյայի» վրա ժամանակի ընթացքում բարդված գումարներն էին, որոնք հարկային մատյաններում գրանցվում և հաշվվում էին առանձին՝ դիտելով որպես առանձին պարտավորություն (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 109):

68. Իխրաջաթ – اخراجات - Բառացի նշանակում է «ծախսեր»: Այդպես էին կոչվում այն արտակարգ ծախսերը, որ տարբեր առիթներով ռայաթները պարտավոր էին հատուցել պետությանը կամ նրա պաշտոնյաներին (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 110):

69. Ավարիզաթ - عوارضات - Այս տերմինի տակ հասկացվում էր ռայաթների պարտադիր աշխատանքը զանազան արտակարգ պատահարների ժամանակ: Այս պարտավորությունը շատ հաճախ փոխարինվում էր դրամական տուրքով (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 105):

70. Մ. Սմբատյանցը այս վավերագրի թարգմանական տարբերակում նշում է հիջրայի 1012 թ., որը չի համապատասխանում պատճենում նշված թվականին (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 786 – 7):

71. Մ. Սմբատյանցը այս վավերագրի թարգմանական տարբերակում նշում է հիջրայի 1016 թ., որը նույնպես չի համապատասխանում պատճենում նշված թվականին (Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 787 – 8):

72. Հայերեն թարգմանական տարբերակը տես Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 790 – 791: Այստեղ նույնպես հրովարտակի թվականը սխալ է նշված (1066 հ. թ.): Այն, որ ճիշտ է 1046 հ. թ. հաստատում է նաև այն հանգամանքը, որ շահ Սաֆի Ա-ն, որի անունից տրված է հրովարտակը, իշխել է 1038/1629 – 1052/1642թթ., իսկ 1066 հ. թ. Իրանի շահն էր Աբաս Բ-ն:

73. Այս վավերագրի հայերենի թարգմանված տարբերակը տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 792 – 794:

74. Թարգմանված տարբերակը տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 795 – 796:

75. Վավերագրի հայերեն տարբերակը տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 804 – 805:

76. Վավերագրի հայերեն տարբերակը տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 802 – 803:

77. Մ. Սմբատյանցի հայերեն թարգմանության մեջ թվականը սխալ է (1260 հ. թ., պետք է լինի 1240 հ. թ.) տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 800 – 801:

78. Վավերագրի հայերեն տարբերակը տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 798 – 800:

79. Վավերագրի հայերեն տարբերակը տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 806 – 808:

80. Բեկլարբեկ – [illegible] - Սեֆյան Իրանի սահմանամերձ նահանգներում կամ կուսակալություններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին «բեկլարբեկեր»: Իրանում XVI - XVII դարերում կային 13 բեկլարբեկություններ, որոնցից հյուսիս-արևմտյան սահմանումն էին գտնվում Ատրպատականի,

Ղարաբաղի (Գանձակի), Շիրվանի և Չուխուր Սաադի կամ Երևանի բեկլար-բեկությունները:

81. Հայերեն թարգմանությունը տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 791 – 2:
82. Հայերեն թարգմանությունը տե՛ս Մ. Սմբատյանց, նշվ. աշխ., էջ 796 – 7:
83. Սալիքանե - [illegible] – Կալվածատիրոջ կամ մալիքին վճարվող հողային ռենտա: Համանիշներ «բահրաչե», «մուլք» (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 112):
84. Քյադխուդա - [illegible] – Այսպես էին կոչվում գյուղական ավագները: Սակայն չպետք է հասկանալ միայն գյուղի «գեղջավագի», «տանուտերի» կամ «ռեսի» իմաստով. մի գյուղում կարող էին լինել մի քանի քյադխուդաներ, դրանք փաստորեն գյուղի ավագների կամ «աղսախկալների» (պարսկ. – «ռիշսեֆիդ») խորհրդի անդամներն էին, որոնք այդ անունը ստացել էին երբեմն գյուղի տանուտեր եղած ժամանակ: Այդ պաշտոնից ազատվելուց հետո էլ նրանք շարունակում էին կոչվել քյադխուդաներ ու մասնակցում էին ավագների խորհրդին(Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 122):
85. Նշված են մահմեդական սրբերի հոմանիշները. Նաբի («մարգարե») – Մուհամմադ, Վասսի («հոգաբարձու») - Ալի, Բաթուլ («կույս») – Սուհամմադի դուստր Ֆաթիմա, Սիբթայն («երկու թոռ») – Մուհամմադի թոռներ ու Ալիի որդիներ Հասանը և Հուսեյնը, Սաջադ («աղոթող») - Ալի իբն Հուսեյն, Բաղեր («ճանաչող») – Սուհամմադ իբն Ալի, Սադեղ («հավատարիմ») – Ջա'ֆար իբն Սուհամմադ, Քազեմ («բարկությունը զսպող») – Սուսա իբն Ջա'ֆար, Ռեզա («համաձայնություն, թույլտվություն») - Ալի իբն Մուսա, Թաղի («աստվածավախ») – Սուհամմադ իբն Ալի, Նաղի («մաքուր, հրաշալի») - Ալի իբն Մուհամմադ, Ասքյարի («մարտական, ռազմական») – Հասան իբն Ալի, Մահդի («աստծով առաջնորդվող». շիաները հավատում են, որ վերջին *իմամը* անհետացել է երկրի երեսից, բայց անտեսանելի կերպով կառավարում է մարդկությանը ճակատագիրը և սպասում են նրա գալուն) – Մուհամմադ իբն Հասան:
86. Օլքա - [illegible] – Հողային այնպիսի տիրույթներ, որոնք որպես ավատ տրվում էին քոչվոր ցեղերի պարագլուխներին և բարձրաստիճան զինվորականությանը՝ ամիրներին: Օլքա ստացող ամիրները պարտավոր էին պահանջված դեպքում որոշյալ քանակությամբ զորք տրամադրել կենտրոնական իշխանությանը: Օլքայի ամիրները իրավունք ունեին առանձին դրոշակ ունենալ և հանդիսավոր երթերի ու զորաշարժերի ժամանակ հատուկ թմբուկներով թմբկահարել (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 123):
87. Ռայաթ, ճիշտը՝ ռա'իյյաթ - [illegible] – Սկզբնաղբյուրներում գործ է ածվում հպատակ և հարկատու ժողովրդի, հատկապես նստակյաց, հողագործ գյուղացիության իմաստով: Իսկ խաշնարած քոչվորությունը կոչվում էր «իլաթ - [illegible]» և ավելի արտոնյալ վիճակում էր գտնվում (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 118 - 119):
88. Ղուլամ - [illegible] - Այսպես կամ պարզապես «ղուլ» էին կոչվում այն հեծյալները, որոնք մեծ մասամբ կամ իրենք էին նոր մահմեդականություն ընդունել և կամ հանդիսանում էին մեկ կամ երկու սերունդ առաջ մահմեդականություն ընդունած քրիստոնյաների զավակներ: Սրանք փաստորեն կազմում էին

շահի անձնական թիկնապահների գվարդիան՝ «ղուլլար - قلر», որոնց թիվը տարբեր աղբյուրների վկայությամբ տատանվել է 10-30 հազարի միջև: Շահի օրինակով, ղուլամների հատուկ ջոկատներ ունեին նաև վիլայեթներում և սահմանամերձ կուսակալություններում իշխող բեկլարբեկները (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ II, Երևան, 1959, էջ 222):

89. Վեզիր – وزير - Սեֆյանների օրոք այսպես էին կոչվում այն բարձրաստիճան ֆինանսական պաշտոնյաները, որոնք մոաթովֆիների հետ միասին հսկում էին պետության, արքունիքի և բանակի ֆինանսներին և զինվորականությանը տրվող ռոճիկների բաշխման գործին: Նրանք անմիջապես պատասխանատու էին էէթեմադ-ուդ-դովլեի առաջ և փաստորեն հանդիսանում էին վերջինիս գործակալները ֆինանսական գործերի կառավարչություններում՝ սարքարություններում (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ II, էջ 232):

90. Խասսե-ե շարիֆե - خاصة شريفه - Այսպես էին կոչվում արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները, և առհասարակ, շահին ու թագավորական ընտանիքին պատկանող մյուս բոլոր հաստատությունները միասին վերցրած: Դրանք բոլորն ունեին հատուկ գործերի կառավարչություն, որ կոչվում էր «Սարքար-ե խասսե-յե շարիֆե» (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ I, էջ 110):

91. Մաջլեսնեիս - جلسنويس - - բարձրաստիճան ամիրների խորհրդի հանձնակատարն էր որը երեք գլխավոր պարտականություն ուներ. նախ՝ պալատական պատմագրության շարադրումը; համարվում էր շահի անձնական քարտուղարը; շահի գլխավոր երազահանը:

92. Նշված են մահմեդական սրբերի անունները իրենց հոմանիշներով և առանց հոմանիշների:

93. 1656/1657:

94. Սարքար – سرجير - Գործերի լիազոր-կառավարիչ, տնօրեն: Գործ է ածվում հատկապես տնտեսական գործերը տնօրինող հաստատության կամ վարչության իմաստով, ուստի որոշ դեպքերում թարգմանված է «սարքարություն» (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ II, էջ 230):

95. Դանգ - دانگ – Կալվածատիրական՝ մուլքային գյուղերից ստացվող ամբողջ եկամուտը կամ ռենտան, որ սովորաբար կոչվում էր «մուլք», դիտվում էր որպես մի ամբողջություն և, ծանրության մանր միավոր «միսղալ»-ի նման բաժանվում էր 6 դանգի: Գյուղերի մուլքերը առուծախի էին ենթարկվում ինչպես ամբողջությամբ, որ կոչվում էր «շեշդանգ - ششدانگ» (վեց դանգ), այնպես նաև մի քանի, երբեմն էլ մեկ, կես կամ քառորդ դանգով, որ անվանվում էր «թասուջ» (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ II, էջ 213):

96. Էէթեմադ-ուդ-դովլի - اعتماد الدوله - Այսպես էր կոչվում պետության առաջին վեզիրը, որ կոչվում էր նաև «Մեծ վեզիր» («Վեզիր-ե Ազամ- وزير اعظم»): Նա վերահսկում էր երկրի բոլոր վարչական և ֆինանսական գործերին, փաստորեն կատարելով մինիստր – նախագահի և արտաքին գործերի մինիստրի ֆունկցիաները (Հ. Դ. Փափագյան, նշվ. աշխ., պրակ II, էջ 216):

97. Սարխաթ - سرخط - Ֆեոդալներին, հոգևորականությանը, բարձրաստիճան պաշտոնյաներին և հատկապես զինվորականությանը տրվող ոռճիկների և այլ կարգի պարգևատրությունների իրացմանը հսկող և հաշվառման ենթարկող հատուկ գրասենյակ, որի պետը կոչվում էր «բարձրագույն դիվանի սարխաթնիս» («սարխաթնվիս-ե դիվան-ե ալա - سرخط دیوان علی»)· Սա բարձրագույն դիվանի 18 խոշոր ֆինանսական պաշտոնյաներից մեկն էր, որ «լաշգյարնվիս»-ի հետ միասին հսկում էր զինվորականությանը տրվող ռոճիկներին: Ռոճիկների հատուցման, պաշտոնների և այլ պարգևատրությունների վերաբերյալ տրվող բոլոր հրովարտակները առանց սարխաթնեիսի ստորագրության և կնիքի համարվում էին անվավեր: Ներկայացվող բոլոր հրովարտակները նա գրանցում էր հատուկ մատյանում, որ կոչվում էր «սարխաթի դաֆթար», ապա հրովարտակի մյուս էջի վրա մակագրում էր «արձանագրվեց սարխաթի դաֆթարում» (ثبت دفتر سرخط شد) և կնքում (Հ. Դ. Փափազյան, նշվ. աշխ., պրակ I. էջ 230):

98. Ռուզնամչե - روز نامچه – մատյան, ուր գրանցվում էին բարձրաստիճան հոգևորականների (կաթողիկոսներ, վանքերի առաջնորդներ) ու այլ պաշտոնյաների (մելիքներ) իրավունքները հաստատող շահական հրամանագրերը: